

Հրատարակվում է

ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ
ԱԶԱԿՑՈՒԹՅԱՄԲ

SPONSORED BY
THE COUNCIL OF EUROPE

ASSOCIATION OF JUDGES OF THE REPUBLIC OF ARMENIA

EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS

COLLECTION OF JUDGMENTS

Edited by Alvina Gyulumyan

Member of the Constitutional Court of the Republic of Armenia,

President of the Association of Judges of the RA

YEREVAN 2002

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՎՃԻՌՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՀՀ սահմանադրական դատարանի անդամ,
ՀՀ Դատավորների միության նախագահ
Ալվինա Գյուլումյանի ընդհանուր խմբագրությամբ

ԵՐԵՎԱՆ 2002

**Տպագրվում է ՀՀ Ղատավորների միության
խորհրդի որոշմամբ**

Խմբագիր

**ՀՀ սահմանադրական դատարանի
աշխատակազմի գլխավոր մասնագետ
Լիանա Հակոբյան**

Վճիռներն անգլերենից թարգմանել են.

Լուսինե Պողոսյանը
Մարինա Մխիթարյանը
Կարինե Բալայանը
Սոնա Հովհաննիսյանը
Վահե Ենգիբարյանը
Աննա Ղազարյանը

ՇՈՒԼԵՐ -ԶԳՐԱԳԵՆՆ ԸՆԴԴԵՄ ՇՎԵՅՍԱՐԻԱՅԻ ԳՈՐԾԸ

CASE OF SCHULER-ZGRAGGEN v. SWITZERLAND

Դատարանի 1993թ. մայիսի 28-ի

Վճիռը

Շուլեր-Ջգրագենն ընդդեմ Շվեյցարիայի գործով,
Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, ղեկավարվելով Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի («Կոնվենցիա») 43-րդ հոդվածով և Դատարանի կանոնակարգի համապատասխան դրույթներով, նիստ գումարելով որպես Պալատ՝ դատավորների հետևյալ կազմով՝ պրն Ռ. Բերնհարդ՝ Նախագահ, պրն Ֆ. Գյուլչուղլու, պրն Բ. Ուոլշ, պրն Բ. Ռուսսո, պրն Ա. Սփիլման, պրն Ի. Ֆոյգել, պրն Ա.Ն. Լուազու, պրն Մ.Ա. Լոպես Ռոչա, պրն Լ. Վիլդհաբեր, ինչպես նաև պրն Մ-Ա Էյշեն, Քարտուղար և պրն Յ. Պեցոլդ, Քարտուղարի տեղակալ,

1993թ. հունվարի 30-ի և մայիսի 28-ի դռնփակ խորհրդակցություններից հետո՝

մայիսի 28-ին կայացրել է հետևյալ վճիռը

Վարույթը

1. Գործը Դատարան է հանձնվել Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովի («Հանձնաժողով») և Շվեյցարիայի Համադաշնության կառավարության կողմից («Կառավարություն») 1992թ. մայիսի 25-ին և օգոստոսի 5-ին՝ Կոնվենցիայի 47-րդ հոդվածով և 32-րդ հոդվածի 1-ին կետով (հոդված 32-1, հոդված 47) նախատեսված եռամսյա ժամկետում: Գործի համար առիթ է հանդիսացել 25-րդ հոդվածի համաձայն Շվեյցարիայի քաղաքացի տկն Մարգրիտ Շուլեր-Ջգրագենի կողմից 1988թ. դեկտեմբերի 29-

ին ընդդեմ Շվեյցարիայի Հանադաշնության՝ Հանձնաժողով ներկայացված գանգատը (14518/89):

Հանձնաժողովի առաջարկը հիմնվում էր 44-րդ և 48-րդ հոդվածների (հոդված 44, հոդված 48) և այն հայտարարության վրա, որով Շվեյցարիան ճանաչում էր Դատարանի պարտադիր իրավագործությունը (46-րդ հոդված); Կառավարության դիմումը հիմնվում էր 45-րդ, 47-րդ և 48-րդ հոդվածների վրա (հոդված 45, հոդված 47, հոդված 48): Առաջարկվում էր որոշել, թե արդյո՞ք գործի հանգամանքները վկայում են պատասխանող պետության կողմից 6-րդ հոդվածի 1-ին կետով (հոդված 6-1)՝ առանձին, կամ 14-րդ հոդվածի հետ համատեղ, իր ստանձնած պարտավորությունների խախտման մասին:

2. Ի պատասխան Դատարանի կանոնակարգի 33-րդ կանոնի 3 (d) կետի համաձայն կատարված հարցման, դիմողը հայտարարել է, որ ցանկանում է մասնակցել դատավարությանը, և նշանակել է փաստաբանի, որը պետք է ներկայացներ իրեն (30-րդ կանոն):

3. Պալատի կազմում ընդգրկված էին ex officio պրն L. Վիլդհաբերը՝ Շվեյցարիայից ընտրված դատավոր (Կոնվենցիայի 43-րդ հոդված) և պրն Ռ. Ռիսդալը՝ Դատարանի նախագահ (21-րդ կանոն, կետ 3(b)): 1992թ. մայիսի 29-ին Նախագահը՝ Քարտուղարի ներկայությամբ, վիճակահանությամբ որոշել է Պալատի մյուս 7 անդամներին, մասնավորապես՝ պրն Բ. Ուոլշին, պրն Ք. Ռուսսոյին, պրն Ա. Սփիլմանին, պրն Ի. Ֆոյգելին, պրն Ա.Ն.Լուազուին, պրն Ս.Ա. Լոպես Ռոչային և պրն Բ. Ռեպիկին (Կոնվենցիայի նախկին 43-րդ հոդված և 21-րդ կանոն, կետ 1): 1993թ. հունվարի 1-ից հետո պրն Ֆ. Գյոլչուլուն՝ փոխարինող դատավոր, փոխարինել է պրն Ռեպիկին, որի պաշտոնավարության ժամկետն ավարտվել էր Չեխոսլովակիայի Դաշնային Հանրապետության փլուզուման հետևանքով (Կոնվենցիայի 38-րդ հոդված և 65-րդ հոդված, կետ 3 և 22-րդ ու 24-րդ կանոնների կետ 1):

4. Պրն. Ռիսդալն ստանձնել է Պալատի նախագահի լիազորությունները (21-րդ կանոն, կետ 5) և Քարտուղարի տեղակալի միջոցով խորհրդակցել Կառավարության գործակալի, Հանձնաժողովի պատվիրակի և դիմողի փաստաբանի հետ՝ դատավարության կազմակերպման վերաբերյալ (37-րդ կանոն, կետեր 1 և 38): Այս առթիվ ընդունված կարգադրությունների համաձայն՝ Քարտուղարը 1992թ. նոյեմբերի 2-ին և 4-ին ստացել է, համապատասխանաբար, Կառավարության և դիմողի գրավոր բացատրությունները: Դեկտեմբերի 3-ին Հանձնաժողովի քարտուղարը տեղեկացրել է Դատարանի Քարտուղարին, որ պատվիրակն իր բացատրությունները կներկայացնի լսումների ժամանակ: 1992թ. օգոստոսի 31-ին Նախագահը թույլ է տվել դիմողին Դատարանին դիմել

զերմաներենով (27-րդ կանոն, կետ 3):

5. Դեկտեմբերի 18-ին Հանձնաժողովը, Նախագահի կարգադրությունների համաձայն, Քարտուղարի ներկայացրած պահանջի հիման վրա ներկայացրել է Հանձնաժողովում գործի վարույթի արձանագրությունը:

6. Նախագահի որոշմամբ դռնբաց լսումները տեղի են ունեցել 1993թ. հունվարի 26-ին Սարգուսի իրավունքների պալատում՝ Ստրասբուրգում: Մինչ այդ Դատարանը գումարել էր նախապատրաստական հանդիպում: Պրն. Բերնհարդը՝ Դատարանի փոխնախագահը, փոխարինել էր պրն. Ռիսդալին, որ չէր կարող մասնակցել գործի հետագա քննությանը (21-րդ կանոն, կետ 5, 2-րդ ենթակետ):

Դատարանում կողմերին ներկայացնում էին.

(a) Կառավարությունը

պրն Օ. Յակոտ Գիյարմոն՝ Արդարադատության դաշնային

գրասենյակի տնօրենի օգնական

գործակալ

պրն Ռ. Սփայրան՝ Դաշնային ապահովագրական դատարանի դատավոր

պրն Ֆ. Շուրմանը՝ Արդարադատության դաշնային

գրասենյակի միջազգային հարաբերությունների և

եվրոպական իրավունքի բաժնի պետի տեղակալ

խորհրդական

(b) Հանձնաժողովը՝

պրն Ֆ. Մարտինեսը

պատվիրակ

(c) դիմողին՝

Պրն Լ. Մինելլի Ռեքսսանուոլտը

խորհրդական:

Ղատարանը լսել է Կառավարության անունից պրն Յակոտ-Գիյարմոյի և պրն Սփայրայի ելույթները, պրն Մարտինեսի ելույթը՝ Հանձնաժողովի, և պրն Մինելլիինը՝ դիմողի անունից, ինչպես նաև լսել է իր հարցերին վերջիններիս պատասխանները:

Փաստերի վերաբերյալ

I. Գործի հանգամանքները

7. Շվեյցարիայի քաղաքացի Տկն Մարգրիտ Շուլեր-Ջորագենը, ծնված 1948թ., ամուսնացել է 1972թ.: Ապրում է Շատդորֆում՝ Ուրի կանտոնում:

A. Հաշմանդամության թոշակի նշանակումը

8. 1973թ. սկսել է աշխատել Ալդորֆի D. արդյունաբերական ընկերությունում (Ուրի կանտոն): Գործատուն կանոնավոր կերպով նրա աշխատավարձից պահումներ է կատարել հոգուտ Հաշմանդամության ապահովագրության դաշնային ծրագրի (տես ստորև՝ կետ 33):

9. 1975թ. գարնանը նա հիվանդացել է բաց թոքային պալարախտով: 1976թ. ապրիլի 29-ին դիմել է թոշակի խնդրանքով՝ հիվանդության պատճառով այլևս աշխատանքը շարունակելու անկարողության հիմնավորմամբ:

Շվեյցարական՝ Մեքենաների և մետաղարդյունաբերության ընկերության (Ausgleichskasse) Փոխհատուցման գրասենյակը 1976թ. սեպտեմբերի 24-ին որոշում է ընդունել նշանակել հաշմանդամության թոշակ՝ կիսով չափ վճարմամբ, 1976թ. ապրիլի 1-ից հոկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար:

10. 1978թ. սեպտեմբերի 28-ի որոշմամբ D. ընկերությունը, դիմողի հիվանդության պատճառով, վերջինիս 1979թ. հունվարի 1-ից ազատել է զբաղեցրած աշխատանքից:

11. Թոշակի պահանջով տկն Շուլեր-Ջորագենի նոր դիմումից հետո փոխհատուցման գրասենյակը 1980թ. մարտի 25-ին որոշում է ընդունել առ այն, որ դիմողը ֆիզիկապես և մտավոր առունով պիտանի չէ աշխատանքի համար, և որոշել է վերջինիս վճարել լրիվ չափով թոշակ՝ սկսած 1980թ. մայիսի 1-ից:

1981 և 1982թթ. հաշմանդամության-ապահովագրական մարմինները, վերանայելով նրա գործը, հաստատել են թոշակի նշանակումը:

12. 1984թ. մայիսի 4-ին ծնվել է դիմողի որդին:

B. Գործի վարույթը Ուրի կանտոնի Հաշմանդամության ապահովագրության խորհրդում

1. Բժշկական քննությունը

13. 1985թ. Ուրի կանտոնի Հաշմանդամության ապահովագրության խորհուրդը (IV-Kommission) տկն Շուլեր-Ձգրագենին առաջարկել է բժշկական քննություն անցնել Լյուցերնի հաշմանդամության-ապահովագրության բժշկական կենտրոնում (Medizinische Abklärungsstelle der Invalidenversicherung):

14. Բժշկական կենտրոնը բժիշկներ F-ին և B-ին խնդրել է ներկայացնել դիմողի առողջության, մասնավորապես՝ թոքերի և հոգեկան վիճակի վերաբերյալ 2 եզրակացություն: Կենտրոնը դրանք ստացել է, համապատասխանաբար, 1985թ. դեկտեմբերի 10-ին և 24-ին: 1986թ. հունվարի 14-ին Կենտրոնը պատրաստել է ամփոփագիր՝ կցելով դրան բժիշկ B-ի եզրակացությունը, որում ասվում էր, որ դիմողը ընդհանրապես պիտանի չէ զրասենյակային աշխատանքի համար, իսկ տնային աշխատանքի հնարավորությունը գնահատվում էր 60-70%:

2. 1986թ. մարտի 21-ի որոշումը

15. 1986թ. մարտի 21-ին Հաշմանդամության ապահովագրության խորհրդի որոշմամբ 1986թ. մայիսի 1-ից դադարեցվել է տկն Շուլեր-Ձգրագենի թոշակի վճարումը, որն այդ պահին կազմում էր 2,016 շվեյցարական ֆրանկ (CHF): Այս որոշումը հիմնավորվում էր դիմողի երեխայի ծնունդով պայմանավորված նրա ընտանեկան դրության արմատական փոփոխությամբ, առողջության բարելավմամբ և տնային տնտեսությունը 60-70%-ով վարելու կարողությամբ:

C. Գործի վարույթը Ուրի կանտոնի Խնամազուրկ ծերերի և հաշմանդամների ապահովագրության հարցերով գանգատարկման հանձնաժողովում

1. Գանգատը և գործին առնչվող փաստաթղթերին ծանոթանալու և այդպիսիք ներկայացնելու վերաբերյալ դիմումները

16. 1986թ. ապրիլի 21-ին տկն Շուլեր-Զգրագենը գանգատ (Beschwerde) է ներկայացրել Ուրի կանտոնի Խնամագուրկ ծերերի և հաշմանդամների ապահովագրության հարցերով գանգատարկման հանձնա (Rekurskommission für die Alters – Hinterlassenen - und Invalidenversicherung- «Վերաքննիչ խորհուրդ»)՝ պահանջելով հաշմանդամության թոշակն ամբողջությամբ կամ, ծայրահեղ դեպքում, կիսով չափ՝ այն հիմնավորմամբ, որ Հաշմանդամության ապահովագրման դաշնային օրենքն իրեն թոշակի իրավունք է վերապահում այնքան ժամանակ, քանի դեռ ինքը գոնե 66,66%-ով անաշխատունակ է: Որպեսզի շարունակի թոշակ ստանալը, նա նաև Խորհրդին խնդրել է իր գանգատին տալ կասեցնող ուժ:

17. Խորհուրդը վերոհիշյալ դիմումը մերժել է մայիսի 7-ին:

18. Մայիսի 22-ին տկն Շուլեր--Զգրագենը հրաժարվել է իր փաստաբանի ծառայություններից:

19. Մայիսի 26-ին նա այցելել է Հաշմանդամության ապահովագրության խորհրդի գրասենյակ՝ Վերաքննիչ խորհրդի ուղարկած իր բժշկական գործն ուսումնասիրելու համար, սակայն նրան դա անել չի թույլատրվել:

Նույն օրը նա այս մասին գանգատ է ներկայացրել Հաշմանդամության ապահովագրության խորհուրդ՝ պահանջելով իրեն իրավունք տալ ծանոթանալու գործին կամ գոնե որոշ կարևոր փաստաթղթերի պատճեններին:

1986թ. հուլիսի 28-ին նույն Խորհրդին հղած իր նամակում նա մեկ անգամ ևս պահանջել է հնարավորություն տալ իրեն ծանոթանալու գործին, մասնավորապես՝ «1975-1986 թթ. ժամանակահատվածում անցկացված բոլոր բժշկական քննությունների եզրակացություններին և լաբորատոր տեսքերի արդյունքներին» և ստանալու անհրաժեշտ փաստաթղթերը:

2. 1987թ. մայիսի 8-ի որոշումը

20. Վերաքննիչ խորհուրդը 1987թ. մայիսի 8-ին մերժել է գանգատը: Առաջինը՝ գործին ծանոթանալու իրավունքը չի ենթադրում դրանից փաստաթղթեր ստանալու կամ պատճենահանելու իրավունք: Բավարար է և այն, որ գանգատարկուին ընձեռվել է Վերաքննիչ խորհրդի քարտուղարությունում իր գործի նյութերին ծանոթանալու հնարավորություն,

որից նա չի օգտվել, չնայած այդ մասին բազմիցս իրեն արված առաջարկներին:

Երկրորդը՝ չի կարող հաշվի չառնվել այն հանգամանքը, որ եթե նույնիսկ դիմողը եղել է անաշխատունակ, նա պետք է բավարարված լիներ երեխայի ծննդից հետո տնտեսությունը վարելով: Ամեն դեպքում, հաշվի առնելով բժշկական կենտրոնի իրականացրած քննությունները՝ տվյալ դեպքում հաշմանդամությունը բավարար չէր մորը և տնային տնտեսուհուն թոշակ նշանակալու համար: Տկն Շուլեր-Ջորագենը կարող էր և ավելի մեծ ակտիվություն հանդես բերել, եթե իսկապես վճռել էր աշխատել, չնայած իր ընտանեկան նոր հանգամանքներին: Թոշակ նշանակելու մերժումը կարող էր նպաստել նրա աշխատելու անկարողությունից առաջացած նյարդային լարվածությունից ապաքինմանը:

3. Հետագա վարույթները

21. 1987 թ. օգոստոսի 11-ին տկն Շուլեր-Ջորագենը դիմել է Վերաքննիչ խորհուրդ՝ հայտարարելով, թե իրեն անհրաժեշտ են բոլոր փաստաթղթերն ու փորձագիտական եզրակացությունները՝ քաղաքացիական հայց հարուցելու դեպքում դրա բավարարման հնարավորությունները գնահատելու համար: Նա շեշտել է մասնավորապես պերֆուզիայի ճառագայթմանը, թոքերի աշխատանքի տեսքին, արյան մեջ գազի պարունակությանը և պլետիսմոգրամային վերաբերող նյութերը:

22. Օգոստոսի 13-ի իր նամակում Վերաքննիչ խորհուրդը պատասխանել է հետևյալը՝
«..... Այս փաստաթղթերը հիմք են հանդիսացել բազմաթիվ բժշկական եզրակացությունների համար: Դրանք ներառված են մեր անկետաներում բացառապես այն պատճառով, որ ձեզ տրված է նրանց ծանոթանալու իրավունք: Ուստի մենք չենք կարող Ձեզ տրամադրել անհրաժեշտ փաստաթղթեր»:

D. Վարույթը Ապահովագրական դաշնային դատարանում

1. Վարչա-իրավական գանգատը

23. 1987թ. օգոստոսի 20-ին տկն Շուլեր-Ջորագենը Վերաքննիչ խորհրդի որոշման դեմ գանգատ է ներկայացրել դաշնային Ապահովագրական դատարան՝ պահանջելով թոշակը՝ ամբողջությամբ, կամ իբրև այլընտրանք՝ գործը փոխանցել առաջին ատյանի դատարանի քննությանը: Նա պահանջել է նաև գործի բոլոր նյութերին ծանոթանալու թույլտվություն (vollumfängliches Akteneinsichtsrecht):

24. 1987թ. հոկտեմբերի 20-ին Ապահովագրական դաշնային դատարանն ստացել է Փոխհատուցման գրասենյակի հաշմանդամության-ապահովագրական բաժնի, իսկ նոյեմբերի 9-ին՝ Սոցիալական ապահովագրության դաշնային գրասենյակի բացատրությունները: Փոխհատուցման գրասենյակը նշել է, որ հաշմանդամության թոշակի վճարումն անհրաժեշտ է դադարեցնել: Ապահովագրության դաշնային գրասենյակը պնդել է, որ գանգատն անհրաժեշտ է մերժել՝ հիմնվելով իր բժշկական ծառայության եզրակացության վրա, որն արվել էր՝ ելնելով բժշկական կենտրոնի իրականացրած քննությունից:

25. 1987թ. նոյեմբերի 23-ին դիմողին ուղղված իր նամակում դաշնային դատարանը տեղեկացրել է նրան այն մասին, որ գործի բոլոր նյութերը ուղարկվել են Վերաքննիչ խորհուրդ, որը «առաջիկա 14 օրերի ընթացքում պետք է դրանց ծանոթանալու հնարավորություն ընձեռներ (նրան)»: Այդուհետ նրան կտրվեր ևս 10 օր ժամանակ՝ վարչա-իրավական գանգատին անհրաժեշտ փաստաթղթերը կցելու համար:

26. 1987թ. նոյեմբերի 30-ին տկն Շուլեր-Ջորագենը ծանոթացել է գործին և պատճենահանել որոշ փաստաթղթեր: Դեկտեմբերի 1-ին գործի նյութերը վերադարձվել են դաշնային Ապահովագրական դատարան:

27. Դեկտեմբերի 7-ին փաստաբան պրն Շլեյֆերը գրավոր տեղեկացրել է դաշնային դատարանին, թե այդուհետ ներկայացնելու է դիմողի շահերը, և խնդրել է իրեն փախանցել նրա գործի նյութերը, ինչը և արվել է դեկտեմբերի 11-ին:

28. 1988թ. հունվարի 11-ին տկն Շուլեր-Ջորագենը լրացուցիչ միջնորդություններ է ներկայացրել՝ ի պաշտպանություն իր գանգատի, մասնավորապես՝ գանգատ առ այն, որ բժշկական կենտրոնն իր փորձագիտական կարծիքում հաստատել է դիմողի թոքերի բնականոն գործելու հանգամանքը՝ հիմնվելով բժիշկ Ֆ.-ի եզրակացության վրա, որը, այնուամենայնիվ, գործում չէր ընդգրկվել: Նա անհիմն և կամայական էր զնահատել նաև Վերաքննիչ խորհրդի կարծիքն այն մասին, որ եթե նույնիսկ նա աշխատունակ լիներ, ամեն դեպքում երեխայի ծննդից հետո պետք է նվիրվեր տնային տնտեսությանը:

2. 1988թ. հունիսի 21-ի վճիռը

29. 1988թ. հունիսի 21-ին Ապահովագրական դաշնային դատարանը վճիռ է կայացրել, համաձայն որի՝ մայիսի 1-ից տկն Շուլեր-Ջորագենը 33,33%-ով անաշխատունակ է եղել, և այդ հիմքով նա իրավունք է ունեցել ստանալու թոշակ՝ 50%-ի չափով, եթե կրում է ֆինանսական դժվարություններ, և այս կապակցությամբ որևէ ապացույցի բացակայության պատճառով գործը պետք է փոխանցվի Փոխհատուցման գրասենյակ:

Նման դեպքում դատարանի գործառույթը չէր սահմանափակվում դաշնային օրենքի հետ համապատասխանությունը որոշելով և հաստատելով, որ դատական լիազորությունները չեն սահմանազանցվել կամ չարաշահվել: Այն կարող էր քննել նաև վիճարկելի որոշումների հիմնավորվածությունը և կաշկանդված չէր ո՛չ ստորին ատյանի դատարանի հայտնաբերած փաստերով, ո՛չ կողմերի գանգատներով:

Դիմողը հաջողության էր հասել Վերաքննիչ խորհրդի դեմ իր գանգատում՝ առ այն, որ Խորհուրդը իրեն չէր տրամադրել անհրաժեշտ փաստաթղթերը՝ ծանոթանալու համար: Նրան հաջողվել էր գործը վիճարկել Դաշնային դատարանում, որի փաստաթղթերին ծանոթանալու հնարավորություն իրեն տրվել էր, և որը փաստերը և իրավունքի հարցերը քննարկել էր լիակատար ազատորեն:

Ինչ վերաբերում է թոշակի պահանջին, դատարանը նշել է.

«Անհրաժեշտ է նկատի ունենալ այն փաստը, որ ամուսնացած շատ կանայք աշխատանքի են անցնում մինչև առաջնեկի ծնունդը, սակայն դադարեցնում են աշխատանքը, քանի դեռ երեխաները ծնողի խնամքի և դաստիարակության կարիքն ունեն: Այս պնդումը՝ հիմնավորված առօրյա կյանքի փորձով, փորձ, որը պետք է հաշվի առնվի անաշխատունակությունը գնահատելու մեթոդը որոշելիս, պետք է մեկնակետ լինի սույն գործի քննության ժամանակ: Վիճարկվող որոշման ընդունման պահին՝ 1986թ. մարտի 21-ին, 1984թ. մայիսի 4-ին ծնված երեխան ընդամենը 2 տարեկան էր և, հետևաբար, հավանականության տրամաբանությամբ (nach Beweisgrad der Überwiegenden Wahrscheinlichkeit) կարելի է պնդել, որ դիմողը, նույնիսկ առողջական խնդիրներ չունենալու դեպքում, կգբաղվեր երեխայով և տնային տնտեսությամբ»:

Դատարանի կարծիքով վերոհիշյալը վերափոխում է նախկին աշխատանքին տևող Շուկեր-Ջորազենի համապատասխանության քննության անհրաժեշտությունը: Խնդիրն ավելի շուտ նրանում է, թե ինչ ծավալով էր դիմողը սահմանափակվել մոր և տնային տնտեսուհու դերում: Այստեղ բավարար է հիմնվել բժշկական կենտրոնի փորձագետների կարծիքի վրա: Այն հանգամանքը, որ թոքերի մասնագետի եզրակացությունը բացակայում էր գործում, թերացում էր (ein gewisser Mangel), սակայն թերապևտների իրականացրած ուսումնասիրությունները թույլ էին տալիս պատասխանել այն հարցին, թե արդյո՞ք 1980թվականից ի վեր դիմողի թոքերի դրության մեջ եղել է որևէ փոփոխություն: Սկսած 1980թվականից դիմողն այլևս չի բուժվել պալարախտի դեմ և, հետևաբար, նա աշխատելու համար լիովին պիտանի է եղել: Ինչ վերաբերում է դիմողի ներոզին, այն զգալիորեն մեղմացել է նույն ժամանակահատվածում, իսկ մեջքի խնդիրները տեսականորեն կարող էին զնահատվել առավելագույնը 25%-ի չափով:

30. 1989թ. հուլիսի 17-ին Փոխհատուցման գրասենյակը որոշել է, որ տևող Շուկեր-Ջորազենը չէր կարող հավակնել թոշակը կիսով չափ ստանալուն, քանի որ 1986, 1987 և 1988 թթ. նրա եկամուտն զգալիորեն անցել է նույն ժամանակահատվածում «կարիքավորության» առավելագույն սահմանագիծը (տե՛ս ստորև՝ կետ 35):
Դիմողն այս որոշումը չի գանգատարկել:

II. Համապատասխան ներպետական օրենսդրություն և պրակտիկա

Ա. Հաշմանդամության ապահովագրություն

31. Հաշմանդամության ապահովագրությունը կարգավորվում է երկու դաշնային օրենսդրական ակտերով, որոնք են՝ 1949թ. դեկտեմբերի 20-ի Օերերի և խնամքի կարիք ունեցողների մասին օրենքը (“OASIA”) և 1959թ. հունիսի 19-ի Հաշմանդամության ապահովագրության մասին օրենքը (“IIA”):

1. Ապահովագրվողը

32. Հաշմանդամության ապահովագրությունը պարտադիր է Շվեյցարիայի ռեզիդենտների համար (OASIA մաս 1-ին): Որոշ այլ անձինք, մասնավորապես՝ օտարերկրյա պետություններում բնակվող Շվեյցարիայի քաղաքացիները, կարող են կամավոր մուծումներ կատարել (OASIA մաս 2-րդ):

2. Կառավարումը

33. Հաշմանդամության ապահովագրությունն իրականացվում է կանտոնային և արհեստակցական միությունների կողմից՝ Կոնֆեդերացիայի վերահսկողությամբ (OASIA մասեր 49-73 և IIA մասեր 53-67):

3. Ֆինանսավորումը

34. Ներկայումս հաշմանդամության ապահովագրությունը մասամբ ֆինանսավորվում է գործատուների և ապահովագրվող անձանց մուծումների, մասամբ՝ պետության մուծումների (գրեթե հավասար հարաբերակցությամբ) միջոցով:

Մուծումների թույլատրելի առավելագույն չափ սահմանված չէ:

Ապահովագրվողի կողմից վճարված գումարը մեխանիկորեն պահվում է նրա եկամուտներից: Ապահովագրվածների երեխաները, կանայք և այրիներն ազատվում են հարկերից, եթե վերջիններս աշխատանքով ապահովված չեն, մինչդեռ ոչ եկամտաբեր աշխատանքով ապահովվածները վճարում են տարեկան 43-ից 1.200 շվեյցարական ֆրանկ (IIA մաս 3-րդ և OASIA մաս 3-րդ):

4. Թոշակները

35. 28 II A բաժինը վերաբերում է անաշխատունակության գնահատմանը: Համաձայն 1-ին ենթամասի՝ թոշակը նշանակվում է անաշխատունակության աստիճանին համապատասխան: Ամբողջական թոշակ տրվում է անաշխատունակության առնվազն 66,66%-ի, իսկ կիսով չափ թոշակ՝ 50%-ից

պակաս անաշխատունակության դեպքում: Խնդրո առարկա ժամանակահատվածում 33.33% անաշխատունակությունն անձին տալիս էր կիսով չափ թոշակի իրավունք՝ միայն «կարիքավորության» դեպքում: Այսօր անաշխատունակության առնվազն 40% է անհրաժեշտ անձին՝ մեկ քառորդ չափով թոշակ սահմանելու համար:

Համաձայն 2-րդ ենթամասի՝ «Անաշխատունակության գնահատման համար այն եկամուտը, որն ապահովագրված անձը կայուն աշխատանքի շուկայի պայմաններում կարող է վաստակել անաշխատունակ դառնալուց և համապատասխան վերականգնողական միջոցառումներ ձեռնարկելուց հետո, համեմատվում է այն եկամտի հետ, որը նա կարող էր վաստակել անաշխատունակ չլինելու դեպքում:

Թոշակի չափը որոշվում է ապահովագրվողի տարեկան միջին եկամտի հիման վրա՝ մուծումների գնահատման համար հիմք ընդունած ողջ եկամուտը բաժանելով կատարված մուծումների տարիների թվին (IIA մաս 36 և հաջորդիվ՝ OASIA մաս 29 և հաջորդների հետ համատեղ): Ամբողջական սովորական թոշակի համար առավելագույն գումարը հավասար է նվազագույն գումարի կրկնապատիկին:

Մուծումները պարտադիր են, և դրանք պահանջելու ժամկետը սահմանված է 5 տարի (OASIA՝ Ծերերի և խնամքի կարիք ունեցողների մասին օրենք, մասեր 15 և 16)»:

Բ. Վերաքննիչ վարույթը

1. Գործի նյութերին ծանոթանալը

36. Դաշնային դատարանը դաշնային Սահմանադրության 4-րդ հոդվածից, որը սահմանում է հավասարության սկզբունքը, բխեցրել է անձի՝ դատական մարմիններում գտնվող իր գործի նյութերին ծանոթանալու իրավունքը:

Այս իրավունքը ենթադրում է, որ անձը պետք է հնարավորություն ունենա ծանոթանալու պաշտոնական փաստաթղթերին և դրանցից գրառումներ կատարելու, սակայն չի ենթադրում գործի նյութերը դուրս բերելու կամ դրանք պատճենահանելու և իրեն տրամադրելու իրավունք (Շվեյցարիայի դաշնային դատարանի (ATF) 1982թ. մարտի 31-ի վճիռը, հատոր 108, մաս Iա, էջեր 5-9):

Վերջին մասի առնչությամբ Դաշնային դատարանը, այնուամենայնիվ, ընդունել է, որ անձինք կարող են պահանջել գործի նյութերի պատճենները, եթե դա համապատասխան մարմնից չի պահանջում չափազանց մեծ ծավալի աշխատանք կամ էական ծախսեր (1986թ. սեպտեմբերի 4-ի վճիռը, ATF, հատոր 112, մաս Iա, էջեր 377-381):

2. Լսումները

(ա) վերաքննիչ մարմիններում

37. Ծերերի և խնամքի կարիք ունեցողների մասին օրենքի 85 (2)(e) մասի առաջին նախադասությունը նախատեսում է՝ «Եթե հանգամանքները դա են պահանջում, կողմերը կկանչվեն լսումների»:

(բ) Ապահովագրական դաշնային դատարանում

38. Համաձայն Ապահովագրական դաշնային դատարանում դատավարական կանոնակարգի 14-րդ կանոնի 2-րդ մասի՝ «Կողմերն իրավունք չունեն պահանջելու լսումներ վերաքննիչ վարույթում:

Նախագահող դատավորը, կազմի հետ համաձայնության գալով՝ կարող է լսումներ նշանակել կողմերից մեկի դիմումի հիման վրա կամ սեփական

նախաձեռնությամբ: Կողմերը կարող են գործի նյութերին ծանոթանալ նախքան լսումները...»:

ՎԱՐՈՒՅԹԸ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՒՄ

39. 1988թ. դեկտեմբերի 29-ին տկն Շուլեր-Չգրագենը դիմել է Հանձնաժողովին: Նա նախ նշել է, որ Վերաքննիչ խորհրդուն գործի նյութերին ծանոթանալու հնարավորությունից իրեն զրկելու և Ապահովագրական դաշնային դատարանում լսումներ չլինելու պատճառով խախտվել է արդար դատաքննության (Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետ) իր իրավունքը: Նա նաև նշել է, որ Դատարանի այն պնդումը, թե դիմողը կդադարեցներ աշխատանքային գործունեությունը նույնիսկ առողջական խնդիրներ չունենալու դեպքում, հանդիսանում է սեռային խտրականություն (14-րդ հոդված և 6-րդ հոդվածի 1-ին կետ):

40. 1991թ. մայիսի 1-ին Հանձնաժողովը գանգատը (թիվ 14518/89) ընդունելի է հայտարարել: 1992թ. ապրիլի 7-ի իր զեկույցում (համաձայն հոդված 31-ի) Հանձնաժողովն արտահայտել է հետևյալ կարծիքը՝

(ա) 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում տեղի չի ունեցել՝ ո՛չ լսումներ չկազմակերպելու մասով (տասը ձայնով՝ ընդդեմ հինգի), ո՛չ գործի նյութերին ծանոթանալու հնարավորությունից զրկելու մասով (տասներեք ձայնով՝ ընդդեմ երկուսի) և

(բ) սեռային խտրականության մասով տեղի չի ունեցել նաև 14-րդ հոդվածի խախտում՝ կապված 6-րդ հոդվածի 1 կետի հետ, (ինը ձայնով՝ ընդդեմ վեցի):

ԴԱՏԱՐԱՆԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՓԱՍՏԱՐԿՆԵՐԸ

41. Ներկայացված գրավոր բացատրություններում Կառավարությունը Դատարանին առաջարկել էր. «ընդունել, որ տվյալ գործով Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի կամ այլ դրույթների խախտում տեղի չի ունեցել (այնքանով, որքանով Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը կիրառելի է և դիմողը, հատուկ գանգատի կապակցությամբ տուժող է, իսկ մյուս գանգատի կապակցությամբ չի սպառել պաշտպանության ներպետական միջոցները)»:

42. Դիմողի փաստաբանը դիմել է Դատարանին հետևյալ խնդրանքով՝
- (ա) «հետևողականորեն առաջնորդվել Ֆելդբրուգի և Դյոմլանդի գործերի սկզբունքներով և ընդունել, որ տվյալ գործում դիմողի կողմից վիճարկվող իրավունքները ևս հիմնականում քաղաքացիական իրավունքներ են և Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի շրջանակներում են»,
 - (բ) «ընդունել, որ տեղի է ունեցել 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում մրցակցային դատավարության իրավունքի առումով» և
 - (գ) «ընդունել, որ Ապահովագրական դաշնային դատարանի կողմից տեղի է ունեցել Կոնվենցիայի 14-րդ հոդվածի խախտում՝ կապված 6-րդ հոդվածի 1 կետի հետ»:

ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՐՑԵՐ

1. 6-րդ հոդվածի 1-ին կետի վիճարկվող խախտումը

43. Տկն Շուլեր-Չգրագենը հայտարարել է, որ ինքը հանդիսանում է 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտման զոհ, որը նախատեսում է.
«Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները ... ունի ... դատարանի կողմից ... արդարացի և իրապարակային դատաքննության իրավունք»:

A. 6-րդ հոդվածի 1-ին կետի կիրառելիությունը

44. Հանձնաժողովը համաձայնել է դիմողին այն հարցում, որ այս դրույթը կիրառելի է տվյալ գործում:

45. Կառավարությունը հակառակն էր պնդել՝ նշելով, որ գործն ունի գերազանցապես հանրային իրավունքին բնորոշ տարրեր: Առաջինը՝ վիճարկելի իրավունքը չէր բխում աշխատանքային պայմանագրից, քանի որ անդամակցությունը պարտադիր է թե՛ գործազուրկների և թե՛ անհատ ձեռներեցների համար: Երկրորդը՝ թոշակի նշանակումը կախված է բացառապես անաշխատունակության աստիճանից՝ առանց հաշվի առնելու ապահովագրվողի եկամտի կամ ունեցվածքի չափը, մուծումների քանակը: Երրորդը՝ շվեյցարական համակարգը չափազանց տարբերակիչ է, մասնավորապես այն առումով, որ դրա ֆինանսավորումը հիմնված է աստիճանական վճարումների, համաչափության և եկամտահարկի մասնակի կրճատման սկզբունքների վրա:

46. Դատարանը կրկին կանգնել է սոցիալական ապահովության վեճերի նկատմամբ 6-րդ հոդվածի 1-ին կետի կիրառելիության հարցի առջև: Առաջին անգամ այս խնդիրը ծագել էր Ֆելդբրուգն ընդդեմ Հոլանդիայի և Դյունլանդն ընդդեմ Գերմանիայի գործերում, որոնց կապակցությամբ վճիռը կայացվել էր 1986թ. մայիսի 29-ին (Շարքեր Ա, թիվ 99 և 100): Այդ ժամանակ Դատարանը նշել էր, որ Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների օրենսդրությունների և պրակտիկայի միջև առկա են վիթխարի տարբերություններ՝ սոցիալական ապահովության ծրագրերի հիման վրա սոցիալական ապահովության նպաստների իրավունքի բնույթի կապակցությամբ: Այնուամենայնիվ, այս վճիռների արդյունքում օրենսդրության զարգացումը և իրավահավասարության սկզբունքը պահանջում են ընդունել, որ այսօր 6-րդ հոդվածի 1-ին կետը կիրառելի է սոցիալական ապահովության ոլորտում՝ ներառյալ նույնիսկ բարեկեցության աջակցությունը (տես՝ Սալեսին ընդդեմ Իտալիայի գործով 1993թ. փետրվարի 26-ի վճիռը (շարքեր Ա, թիվ 257-Է, էջեր 59-60 կետ 9):

Եթե 1986թ. երկու գործերով կայացրած վճիռներում պետության

միջամտությունը բավարար չէր 6-րդ հոդվածի 1-ին կետի կիրառելիության մերժումը հիմնավորելու համար, ապա տվյալ գործում 6-րդ հոդվածի 1-ին կետի կիրառելիության օգտին կան այլ փաստարկեր ևս: Դրանցից ամենակարևորն այն է, որ չնայած Կառավարության մատնանշած հանրային-իրավական տարրերին, խնդիրը չէր սահմանափակվում միայն վարչական մարմինների հետ դիմողի հարաբերություններով, այլ առնչվում էր նաև դիմողի գոյության միջոցներին, և նա պահանջում էր դաշնային օրենքի կոնկրետ նորմերով նախատեսված իր անձնական, տնտեսական իրավունքների պաշտպանությունը (տես վերը՝ կետ 35):

Ընդհանուր առմամբ, Դատարանը որևէ համոզիչ պատճառ չի տեսնում տկն Շուլեր-Ջորազենի՝ հաշմանդամության թոշակի իրավունքը տարբերակելու Տկն Ֆելդբրուգի և Պրն Դյունլանդի՝ սոցիալական ապահովության նպաստի իրավունքից:

Այսպիսով, 6-րդ հոդվածի 1-ին կետը կիրառելի է տվյալ գործի նկատմամբ:

B. Համապատասխանությունը 6-րդ հոդվածի 1-ին կետին

1. Վերաքննիչ խորհրդի գործի նյութերի մատչելիությունը
47. Տկն Շուլեր-Ջորազենն առաջին հերթին գանգատվել է, որ Վերաքննիչ խորհրդում գործի նյութերը բավականաչափ մատչելի չեն եղել իրեն:

(a) **Կառավարության նախնական առարկությունները**
48. Ինչպես և Հանձնաժողովում, այս անգամ ևս Կառավարությունը պնդել է իր առարկությունը դիմողի՝ տուժողի կարգավիճակի անհամապատասխանության վերաբերյալ, նշելով, որ վերջինս չի օգտվել Վերաքննիչ խորհրդի քարտուղարությունում գործի նյութերին ծանոթանալու իրեն ընձեռված հնարավորությունից:
49. Դատարանը նշում է, որ դիմողի գանգատը վերաբերում է ոչ այնքան գործի նյութերին ծանոթանալու, որքան դրանք իրեն հանձնելու կամ պատճենահանելու հնարավորությունից զրկված լինելու հանգամանքին: Հետևաբար, Դատարանը մերժում է Կառավարության նախնական առարկությունը:

(b) Գանգատի էությունը

50. Տկն Շուլեր-Ջորազենը նշել է, որ իր գործի հանգամանքները բավականին խրթին են (ինչպես սովորաբար սոցիալական ապահովությանն առնչվող գործերում), ուստի նա նպատակահարմար է գտել գործի նյութերը ներկայացնել մասնագետների: Այդպիսով, նա հավասար դիրքերում կլինե՞ր վարչական մարմինների հետ, որոնց մշտական տնօրինության տակ էին գտնվում այդ փաստաթղթերը: Բացի դրանից, նրան հնարավորություն չի տրվել ծանոթանալու իր թոքերի վիճակի վերաբերյալ բժիշկ Ֆ.-ի եզրակացությանը, և նա չի կարողացել այն ներկայացնել իր սեփական փորձագետին:

51. Կառավարությունը վիճարկել է այս հայտարարությունը: Վերաքննիչ խորհրդում գործի քննության ժամանակ դիմողը չի օգտվել գործի նյութերին

ծանոթանալու և գրառումներ կատարելու հնարավորությունից: Ապահովագրական դաշնային դատարանում նրան ընձեռվել է բոլոր փաստաթղթերին ծանոթանալու (նման հնարավորություն ունեցել է նաև դիմողի փաստաբանը, որին ներկայացվել են պահանջված փաստաթղթերը) և դրանց մի մասի պատճենահանման հնարավորություն: Ինչ վերաբերում է բժիշկ Ֆ-ի եզրակացությանը, այն իրականում գործի նյութերի մասը չէր կազմում, ինչպես նշել է Ապահովագրական դաշնային դատարանը 1988թ. հունիսի 21-ի իր վճռում. բացի դրանից, այն անփոփոխ էր բժշկական կենտրոնի 1986թ. հունվարի 14-ի զեկույցում (որին ծանոթանալու հնարավորություն դիմողն ունեցել էր): Կարճ ասած՝ պաշտպանության միջոցների հավասարության պայմանը որևէ կերպ չի խախտվել:

52. Դատարանը գտնում է, որ Վերաքննիչ խորհրդում գործի վարույթը տկն Շուլեր-Ջորագենին չի ընձեռել խորհրդին ներկայացված բոլոր մանրամասների ամբողջական և համակարգված պատկերն ունենալու հնարավորություն: Այդուհանդերձ, Դատարանը գտնում է, որ Ապահովագրական դաշնային դատարանը շտկել է այս բացը՝ խորհրդից պահանջելով դիմողին տրամադրել գործի նյութերը, որը կարող է պատճենահանել փաստաթղթերը և հետո գործի նյութերը փոխանցել իր փաստաբանին (տես, իբրև վերջին աղբյուր, *mutatis mutandis*, Էդվարդոն ընդդեմ Միացյալ Թագավորության 1992թ. դեկտեմբերի 16-ի վճիռը, Շարքեր Ա, թիվ 247-Յ, էջեր 34-35, կետեր 34-39): Դատարանը նշում է նաև, որ ո՛չ Ապահովագրական դաշնային դատարանը, ո՛չ Վերաքննիչ խորհուրդը բժիշկ Ֆ.-ի եզրակացությունը իրենց տրամադրության տակ չեն ունեցել:

Ուստի վիճարկվող վարույթներն ընդհանուր առմամբ արդարացի են եղել և այս կապակցությամբ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում տեղի չի ունեցել:

2. Գործի քննությունը Ապահովագրական դաշնային դատարանում

53. Տկն Շուլեր-Ջորագենը զանգատ է ներկայացրել նաև Ապահովագրական դաշնային դատարանում լսումներ չանցկացնելու փաստի առթիվ:

(a) Կառավարության նախնական առարկությունը

54. Կառավարությունը պնդում է, որ դիմողը չի սպառել ներպետական պաշտպանության բոլոր միջոցները, քանի որ չի դիմել Ապահովագրական դաշնային դատարան՝ բանավոր և հրապարակային լսումների պահանջով: Ենթադրվում է, այս ատյանը հազվադեպ է լսումներ անցկացնում, բայց դա չի նշանակում, որ դիմումը միանշանակորեն կներժվեր:

55. Այս նախնական առարկությունը ներկայացնելուն խոչընդոտում է այն հանգամանքը, որ Կառավարությունն այս հայտարարությունն արել է Հանձնաժողովում ընդունելիության մասին որոշումից հետո, մինչդեռ ոչինչ չէր խանգարում նույն անել ավելի վաղ (տես, իբրև վերջին աղբյուր, mutatis mutandis, Փայն Վելի Դեվելոփմենթս ՍՊԸ և այլոք ընդդեմ Իռլանդիայի 1991թ. նոյեմբերի 29-ի վճիռը, Շարքեր Ա, թիվ 222, էջ 21, կետ 45):

(b) Գանգատի էությունը

56. Տկն Շուլեր-Ձորագենը նշել է, որ Ապահովագրական դաշնային դատարանը պետք է լսումներ նշանակեր՝ իր գործով սեփական կարծիք կազմելու և իրեն արդարացի դատաքննության հնարավորություն ընձեռելու համար:

57. Կառավարությունը, հակառակը, նշել է, որ որոշ ոլորտներում դատարանի գուտ գրավոր ընթացակարգով գործի քննությունը որևէ կերպ չի վնասում գործով կողմի շահերին: Այս առնչությամբ բերվել են մի շարք փաստարկներ: Առաջինը՝ սոցիալական ապահովության վեճերի բնույթը ավանդաբար ենթադրում է տեխնիկական և թվային տվյալների առատություն, ինչը դժվարացնում է գործի բանավոր քննությունը: Երկրորդը՝ Ապահովագրական դաշնային դատարան ներկայացված գործերով նա ազատ էր քննելու փաստերը և իրավունքի հարցերը, ինչը բնորոշ է ընդհանուր իրավասության դատարաններին: Սա վերաբերում է մասնավորապես վարչաիրավական գանգատներին, քանի որ այս դեպքերում դաշնային դատարանը կարող է որոշել, թե որքանով է վիճելի որոշումը հիմնավոր, և կաշկանդված չէ ո՛չ կանտոնային իշխանությունների հաստատած փաստերով, ո՛չ էլ կողմերի փաստարկներով: Երրորդը՝ վճիռների թվաքանակը՝ տարեկան մոտավորապես 1,200, կնվազեր, եթե որպես կանոն կիրառվեր հրապարակային, բանավոր վարույթը, նման դեպքում վարույթի երկարատևությունը լրջորեն կխոչընդոտեր գերագույն դատարան դիմելու հնարավորությանը:

58. Դատարանը բազմիցս նշել է, որ դատական լսումների հրապարակայնությունը հանդիսանում է 6-րդ հոդվածի 1-ին կետում ամրագրված հիմնարար սկզբունքը: Այս դրույթի թե՛ տառը և թե՛ ոգին որևէ կերպ չեն խոչընդոտում անձին ազատ կամարտահայտմամբ (բարձրաձայն արտահայտված կամ լռելյայն) հրաժարվելու իր գործի հրապարակային դատաքննության իրավունքից, սակայն ցանկացած նման հրաժարում պետք է արվի աներկբայորեն և չպետք է հակասի հանրության շահերին (տես, ի թիվս այլ աղբյուրների՝ Հակաստունը և Ստարիսոնն ընդդեմ Շվեդիայի 1990թ. փետրվարի 21-ի վճիռը, Շարքեր Ա, թիվ 171- A, էջ 20, կետ 66):

Սույն գործում, Ապահովագրական դաշնային դատարանի դատավարական

կանոնակարգը հստակորեն սահմանում է լսումների հնարավորությունը՝

«կողմերից մեկի պահանջով կամ նախագահող դատավորի

նախաձեռնությամբ» (14-րդ կանոն, 2-րդ կետ. տես վերը՝ կետ 38): Քանի որ

այս դատարանում գործերի վարույթն իրականացվում է հիմնականում առանց

հրապարակային լսումների, ուստի տկն Շուլեր-Ջորագենը կարող էր հավակնել իր գործով նման լսումների անցկացման՝ միայն եթե ինքը կարևորեր դա, ինչը նա չի արել: Չետևաբար, կարելի է հիմնավոր կերպով ընդունել, որ դիմողն աներկբայորեն հրաժարվել է Ապահովագրական դաշնային դատարանում հրապարակային դատավարության իր իրավունքից:

Բացի դրանից, վեճից բխող հարցերը հանրային հետաքրքրություն չէին ներկայացնում, ինչը կարող էր հիմնավորել հրապարակային լսումների անհրաժեշտությունը: Գործի գերազանցապես տեխնիկական բնույթի պատճառով ավելի նպատակահարմար էր այն քննել գրավոր, քան բանավոր ընթացակարգով, բացի դրանից՝ գործի անձնական, բժշկական բնույթը պետք է հետ պահեին դիմողին հրապարակային լսումների ցանկությունից:

Եվ, վերջապես, հասկանալի է, որ հատկապես այս ոլորտում ներպետական իշխանությունները պետք է առանձնակի կարևորեն արդյունավետության և խնայողության խնդիրները: Լսումների պարբերաբար կազմակերպումը կարող էր «խոչընդոտել սոցիալական ապահովության գործերի պատշաճ քննությանը» (տես Դլոմլանդն ընդդեմ Գերմանիայի վերը մեջբերված վճիռը, էջ 30, կետ 90) և հակասել 6-րդ հոդվածի 1-ին կետի պահանջին՝ «ողջամիտ ժամկետներում» գործի քննությունն իրականացնելու վերաբերյալ (տե՛ս, mutatis mutandis, Բողերթն ընդդեմ Բելգիայի գործով 1992 թ. հոկտեմբերի 12-ի վճիռը, Շարքեր Ա, թիվ 235-D, էջեր 82-83, կետ 39):

Չետևաբար, 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում՝ վարույթի բանավոր և հրապարակային բնույթի կապակցությամբ, տեղի չի ունեցել:

3. Բժշկական փորձագետների անկախությունը

59. Դատարանում լսումների ժամանակ տկն Շուլեր-Ձգրագենի փաստաբանները կասկածի էին ենթարկել սոցիալական ապահովության հաստատություններում երկարաժամկետ աշխատանքային պայմանագրով աշխատող բժիշկներն անկախությունը՝ փաստարկելով, որ վերոհիշյալ բժիշկները այդ հաստատություններից են ստանում իրենց եկամտի զգալի մասը:

60. Սա նոր գանգատ էր, որը չէր ներկայացվել Հանձնաժողովում գործի քննության ժամանակ, և որը չի վերաբերում ընդունելիության մասին որոշման սահմաններում Հանձնաժողովի պարզած փաստերին: Նման պայմաններում Դատարանն իրավասու չէ քննության առնելու այն (տես՝ իբրև վերջին աղբյուր և mutatis mutandis, Օլսոնն ընդդեմ Շվեդիայի (թիվ 2) 1992թ. նոյեմբերի 27-ի վճիռը, Շարբեր Ա, թիվ 250, էջեր 30-31, կետ 75):

II. 14-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ ՎԻՃԱՐԿՎՈՂ ԽԱՆՏՈՒՄԸ՝ ԿԱՊՎԱԾ 6-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 1

ԿԵՏԻ ՀԵՏ ՀԱՄԱՏԵՂ ՎԵՐՑՎԱԾ

61. Ի վերջո, տկն Շուլեր-Ձգրագենը հայտարարել է, որ արդարացի դատաքննության իր իրավունքի իրականացման ժամանակ ենթարկվել է սեռային խտրականության: Նա հիմնվել է 14-րդ հոդվածի վրա, որում մասնավորապես ասվում է.

«Կոնվենցիայում ամրագրված իրավունքների և ազատությունների

իրականացումը պաշտպանվում է անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից,

լեզվից, կրոնական, ազգային փոքրամասնության պատկանելությունից,

ունեցվածքից, ծնունդից կամ այլ կարգավիճակներից»:

A. Կառավարության նախնական առարկությունը

62. Ինչպես և Հանձնաժողովում գործի վարույթի ժամանակ, այս անգամ ևս Կառավարությունը հանդես էր եկել առարկությամբ՝ կրկին բերելով ներպետական պաշտպանության միջոցները չսպառելու փաստարկը: Նշվել էր, որ դիմողն ընդամենը բնորոշել է Վերաքննիչ խորհրդի արված ձևակերպումը՝ որպես «կամայական», սակայն այդուհետ պատշաճ գանգատ չի ներկայացրել Ապահովագրական դաշնային դատարան՝ Կոնվենցիայով սահմանված իր իրավունքի իրականացման ժամանակ խտրականության փաստի առկայության վերաբերյալ:

63. Դատարանն ընդունում է Հանձնաժողովի հիմնավորումները: Առաջինը՝ տկն Շուլեր-Ձգրագենն առարկությամբ հանդես է եկել Ապահովագրական դաշնային դատարանի 1988թ. հունիսի 21-ի վճռի ձևակերպումների դեմ, որի կապակցությամբ բողոք չի ներկայացվել: Երկրորդը՝ վարչաիրավական իր գանգատում դիմողն արդեն իսկ քննադատության է ենթարկել Վերաքննիչ

խորհրդի ենթադրությունը (նմանօրինակ)՝ արված 1987թ. մայիսի 8-ի վճռում: Առարկությունը, սակայն, անհիմն է ճանաչվել:

Բ. Գանգատի էությունը

64. Համաձայն դիմողի, Ապահովագրական դաշնային դատարանն իր վճռում առաջնորդվել է «առօրյա կյանքի փորձի վրա հիմնված ենթադրությամբ», մասնավորապես այն հանգամանքով, որ ամուսնացած շատ կանայք երեխայի ծննդից հետո հեռանում են աշխատանքից առաջին և որոշ ժամանակ անց միայն կրկին վերադառնում (տես վերը՝ կետ 29): Այստեղից եզրահանգում է արվել, որ տկն Շուլեր-Չգրագենը կհեռանար աշխատանքից նույնիսկ առողջական խնդիրներ չունենալու դեպքում: Դիմողը կարծում է, որ եթե ինքը տղամարդ լիներ, Ապահովագրական դաշնային Դատարանը երբեք նման որոշում չէր կայացնի, ինչը, սակայն, հերքվել է բազմաթիվ գիտական ուսումնասիրություններով:

65. Կառավարությունն առարկել է, թե 6-րդ հոդվածի 1-ին կետը, ինչպես նաև 14-րդ հոդվածը՝ անուղղակիորեն, կիրառելի չեն, քանի որ գանգատը վերաբերում է ապացույցների օգտագործմանը, ինչը հիմնականում պետական մարմինների իրավասության շրջանակներում է:

66. Դատարանը մեկ անգամ ևս նշել է, որ ապացույցների ընդունելիությունը կարգավորվում է առաջին հերթին ներպետական օրենսդրությամբ, և որ սովորաբար ներպետական դատարաններն են դրանք գնահատում: Ըստ Կոնվենցիայի՝ Դատարանի խնդիրն է պարզել, թե արդյոք գործի վարույթը՝ ամբողջությամբ վերցրած, ներառյալ նաև ապացույցներ ներկայացնելու գործընթացը, արդարացի է եղել (տես՝ իբրև վերջին աղբյուր, mutatis mutandis, Լյուդին ընդդեմ Շվեյցարիայի 1992թ. հունիսի 15-ի վճիռը, Շարքեր Ա, թիվ 238, էջ 20, կետ 43 և վերն արդեն մեջբերված Էդվարդգն ընդդեմ Միացյալ Թագավորության վճիռը, էջեր 34-35, կետ 34):

67. Տվյալ դեպքում, Ապահովագրական դաշնային դատարանն ընդունել է վերաքննիչ խորհրդի պնդումն այն մասին, որ կանայք երեխայի ծննդից հետո հեռանում են աշխատանքից: Դատարանը նույնիսկ չի փորձել կասկածի ենթարկել այդ պնդման հիմնավորվածությունը՝ հակառակ փաստարկների միջոցով:

Ինչպես ձևակերպված է Դաշնային դատարանի վճռում, այդ ենթադրությունը չի կարող դիտվել (ինչպես Կառավարությունն էր պնդում) իբրև անզուգական արված պատահական դատողություն: Ընդհակառակը՝ այն հանդիսանում է պատճառաբանության հիմքը՝ դրանով որոշիչ դեր ունենալով, և հանդիսանում է միայն սեռի հիմքով տարբերակված վերաբերմունքի դրսևորում:

Գենդերային հավասարության խթանումն այսօր առաջնային խնդիրներից է Եվրոպայի խորհրդի անդամ երկրներում, և չափազանց ծանրակշիռ փաստարկներ են պահանջվում հիմնավորելու համար, որ նման

անհավասարությունը չի հակասում Կոնվենցիայի դրույթներին (տես՝ *mutatis mutandis* Աբդուլազիզը, Կաբալեսը և Բալկանդալին ընդդեմ Միացյալ Թագավորության 1985թ. մայիսի 28-ի վճիռը, Շարքեր Ա, թիվ 77, էջ 38, կետ 78): Նման փաստարկներ տվյալ գործում Դատարանը չի տեսել: Ուստի եզրակացնում է, որ որևէ ողջամիտ և օբյեկտիվ հիմնավորման բացակայությունը ենթադրում է, որ տեղի է ունեցել 14-րդ հոդվածի խախտում՝ 6-րդ հոդվածի 1-ին կետի հետ առնչությամբ:

III. 50-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

68. Կոնվենցիայի 50-րդ հոդվածը սահմանում է. «Եթե Դատարանը գտնում է, որ Բարձր պայմանավորվող կողմի իրավապահ կամ այլ մարմնի կայացրած որոշումը կամ ձեռնարկած քայլերը հակասում են Կոնվենցիայում ամրագրված դրույթներին, և եթե այդ կողմի ներպետական օրենսդրությունն ընդեռում է միայն մասնակի փախհատուցման հնարավորություն, ապա Դատարանը, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի բավարարում է տրամադրում»:

A. Վնասը

1. Ոչ նյութական վնասը

69. Տկն Շուլեր-Չգրագենը հայտարարել է, որ ինքը կրել է ոչ նյութական վնաս՝ առանց մասնավորեցնելու դրա չափը, և պահանջել է 22,500 CHF չափով նախնական գումար՝ Կոնվենցիայի ատյաններում գործի լսման ընթացքի համար:

70. Կառավարությունը նշել է, որ խախտում արձանագրող վճռի հրապարակումը բավարարում է 50-րդ հոդվածի պահանջները: Հանձնաժողովի պատվիրակը տեսակետ չի արտահայտել:

71. Դատարանը գտնում է, որ հնարավոր է՝ դիմողը կրել է ոչ նյութական վնաս, սակայն այս վճիռը բավարար փոխհատուցում է տրամադրում կրած վնասի համար:

2. Նյութական վնասը

72. Տկն Շուլեր-Չգրագենը պնդում է նաև, որ զրկվել է հաշմանդամության ամբողջական թոշակից՝ 6-րդ հոդվածի 1-ին կետին և 14-րդ հոդվածին հակասող վարույթների պատճառով: Որևէ կոնկրետ գումար, այնուամենայնիվ, չի նշվել:

73. Կառավարությունը նշել է, որ 1992թ. փետրվարի 15-ից Շվեյցարական օրենսդրությունը Դատարանի կամ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի կողմից հայտնաբերված խախտմամբ տուժածներին թույլ է տալիս դիմել վիճարկելի գործի վերսկսման պահանջով: Ուստի և որոշվել է, որ հարցը վերջնական լուծման համար պատրաստ չէ:

74. Դատարանը համաձայնել է այս կարծիքին: Հետևաբար, հարցի լուծումը պետք է կասեցվի և պետք է սահմանվի հետագա ընթացակարգ՝ պատշաճ կերպով հաշվի առնելով պատասխանող պետության և դիմողի միջև համաձայնության ձեռքբերման հավանականությունը (Դատարանի կանոնակարգի 54-րդ կանոն, կետեր 1 և 4):

B. Ծախքեր և ծախսեր

75. Տկն Շուլեր-Չգրագենը պահանջել է 7,130,90 CHF իր գործի ներպետական վարույթի ժամանակ կրած ծախքերի և ծախսերի դիմաց (պրն Դերեր՝ 300 CHF, պրն Սթյոքլի՝ 2,694,20 CHF, պրն Վեիրլի՝ 2,936,70 CHF, սեփական ծախսեր՝ 1,200 CHF): Դիմողը նաև պահանջել է 14,285,70 CHF՝ Կոնվենցիայի մարմիններում իր գործի քննության ընթացքում ծախսերի դիմաց՝ չներառելով Եվրոպական դատարանում 2 լսումների (մեկը՝ 1993թ. հունվարի 26-ին, մյուսը՝ վճռի կայացման լսումները) մասնակցության հետ կապված ծախսերը:

Կառավարությունը գտել է, որ վերոհիշյալ պահանջները չափից ավելի են:

Դիմողը կանտոնային մարմիններում կամ Ապահովագրական դաշնային դատարանում որևէ իրավաբանական ծախս չի կրել գործի վարույթի ժամանակ, իսկ Հաշմանդամության ապահովագրության խորհրդում, երբ նրան պաշտպանել են 3 փաստաբաններ, նա Կոնվենցիայի վրա հիմնված գանգատ չի ներկայացրել: 5,000 CHF գումարը ավելի քան կբավականացներ Շվեյցարիայում և Ստրասբուրգում հնարավոր բոլոր ծախսերի փոխհատուցման համար:

Հանձնաժողովի պատվիրակը գտնում է, որ Վերաքննիչ խորհրդում գործի վարույթի ժամանակ առաջացած ծախսերը որևէ առնչություն չունեին Կոնվենցիայի խախտման վերականգնման հետ և նա կոչ է անում Դատարանին կիրառել նախադեպային իրավունքը՝ Ստրասբուրգի հաստատություններում գործի վարույթի ժամանակ առաջացած ծախսերի նկատմամբ:

76. Անաչառ քննության հիմքով, 50-րդ հոդվածի պահանջներին համապատասխան, Դատարանը վճում է դիմողին տրամադրել 7,500 CHF:

ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ

1. Միաձայն վճռում է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը կիրառելի է տվյալ գործի նկատմամբ,
2. Միաձայն մերժում է Կառավարության նախնական առարկությունները,
3. Միաձայն վճռում է, որ իրավասու չէ քննության առնելու բժշկական փորձագետների անկախության հարցը,
4. Ութ ձայնով՝ ընդդեմ մեկի, վճռում է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում տեղի չի ունեցել,
5. Ութ ձայնով՝ ընդդեմ մեկի, վճռում է, որ 6-րդ հոդվածի 1-ին կետի հետ կապված տեղի է ունեցել 14-րդ հոդվածի խախտում,
6. Միաձայն որոշում է, որ տվյալ վճիռն ինքնին փոխհատուցում է հանդիսանում դիմողի կրած ոչ նյութական վնասի կապակցությամբ,
7. Ութ ձայնով՝ ընդդեմ մեկի, վճռում է, որ Շվեյցարիայի Համադաշնությունը 3 ամսվա ընթացքում դիմողին պետք է վճարի 7,500 (յոթ հազար հինգ հարյուր) շվեյցարական ֆրանկ՝ կրած ծախքերի և ծախսերի դիմաց,
8. Ութ ձայնով՝ ընդդեմ մեկի, վճռում է, որ նյութական վնասի մասով 50-րդ հոդվածի կիրառելիության խնդիրով դեռևս վաղ է վճիռ կայացնել, ուստի

ա) այս կապակցությամբ հարցը թողնում է առանց լուծման,

բ) կոչ է անում Կառավարությանը և դիմողին առաջիկա 6 ամիսների ընթացքում ներկայացնել իրենց գրավոր դիտողություններն այս խնդրի վերաբերյալ և տեղեկացնել Դատարանին ձեռք բերված հնարավոր համաձայնության մասին;

զ) կասեցնում է գործի հետագա վարույթը և Պալատի Նախագահին է փոխանցում նույնը նշելու իրավասությունը:

Կատարված է անգլերենով և ֆրանսերենով և հրապարակված է դռնբաց նիստում՝ Մարդու իրավունքների պալատում՝ Ստրասբուրգում, 1993թ. հունիսին:

Մարկ-Անդրե Էյշեն

Ռուդոլֆ Բերնհարդ

Քարտուղար

Նախագահ

Կոնվենցիայի 51-րդ հոդվածի 2-րդ կետի և Ղատարանի կանոնակարգի 53-րդ կանոնի 2-րդ կետի համաձայն սույն վճռին կցվում է պրն Գյոլչուղլուի և պրն Ուոլշի չհամընկնող կարծիքը:

Ռ.Բ.

Մ-Ա. Է.

ՂԱՏԱԿՈՐ ԳՅՈՒԼՉՈՒՂԼՈՒ ԶՅԱՄԸՆԿՆՈՂ ԿԱՐԾԻՔԸ

(Թարգմանություն)

Ցավոք, չեմ կարող կիսել մեծամասնության կարծիքը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի հետ կապված՝ 14-րդ հոդվածի կիրառելիության վերաբերյալ:

Դիմողը քննադատության է ենթարկել Ապահովագրական դաշնային Դատարանի հիմնավորումը վճռորոշ հարցի վերաբերյալ, այն է, որ դատարանի եզրակացության համար հիմք է հանդիսացել առօրյա կյանքի փորձը, ըստ որի երեխայի ծննդից հետո դիմողի գործունեությունը կսահմանափակվեր մոր և տնային տնտեսուհու կենցաղով՝ նույնիսկ առողջության խնդիրներ չունենալու դեպքում:

Իր նկատմամբ տեղ գտած սեռային խտրականության վերաբերյալ դիմողի գանգատը տվյալ դեպքում վերաբերում է գործի էությանը, մինչդեռ 6-րդ հոդվածի 1-ին կետը, որն ամրագրում է արդար դատաքննության սկզբունքը, ունի դատավարական բնույթ և վերաբերում է գործի միայն ձևական կողմին:

Այլ կերպ ասած՝ դիմողի գանգատը վերաբերում էր Ապահովագրական դաշնային դատարանի կողմից իր բողոքի քննության արդյունքում օգտագործված հիմնավորումներին, այլ ոչ թե գործի ներպետական վարույթների ընթացքում սեռային խտրականության ենթարկված լինելու հանգամանքին: Որևէ խախտում տեղի չի ունեցել նաև արդարացի դատավարության սկզբունքների կամ չափանիշների առումով:

Այսպիսով իմ եզրահանգումն այն է, որ դիմողի նկատմամբ սեռային խտրականության դրսևորման կապակցությամբ 14-րդ հոդվածի խախտում՝ կապված 6-րդ հոդվածի 1-ին կետի հետ, տեղի չի ունեցել:

ՊԱՏԱՎՈՐ ՈՒՈՒՆԵՒ ՄԱՍՆԱԿԻ ՉՀԱՍՆԵՆԿՆՈՂ ԿԱՐԾԻՔԸ

1. Կարծում եմ, որ Վերաքննիչ խորհրդում գործի նյութերին ծանոթանալու կապակցությամբ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում: Նշված նյութերը պետք է պարունակեին անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը, մասնավորապես՝ թրքաբանական եզրակացությունը, որը փաստորեն բացակայում էր գործի նյութերում: Փաստաթուղթը մտնում էր Վերաքննիչ խորհրդի ձեռք բերած նյութերի մեջ և դրան ծանոթանալու հնարավորությունից զրկվելով՝ դիմողն անբարենպաստ վիճակում է եղել:

2. Կարծում եմ նաև, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում՝ բանավոր լսումներ չանցկացնելու առնչությամբ: Ապահովագրական դաշնային դատարանի դատավարական կանոնակարգը նախատեսում է բանավոր լսումների անցկացում՝ կողմերից մեկի պահանջով կամ նախագահող դատավորի նախաձեռնությամբ: Նման լսումների անցկացումը Կոնվենցիայի պահանջն է, քանի դեռ կողմերը չեն համաձայնում հրաժարվել այդ իրավունքից. տես՝ Լե Կոմտը, Վան Լևենը և Դե Մեյերն ընդդեմ Բելգիայի: Դիմողը նման համաձայնություն չի տվել: Ավելին, չի հաստատվել, որ նրան ընդհանրապես տեղյակ են պահել նման հնարավորության մասին: Ես համամիտ չեմ Դատարանի մեծամասնության այն կարծիքին

(արտահայտված վճռի 58-րդ կետում), որ դիմողը «աներկբայորեն հրաժարվել է օգտվել իր իրավունքից», քանի որ չի ներկայացրել բանավոր և հրապարակային լսումներ անցկացնելու պահանջ: Կոնվենցիայի 6-րդ հոդվածը դիմողի վրա չի թողնում հրապարակային լսումներ պահանջելու բեռը: Գործն առնչվում էր դիմողի քաղաքացիական իրավունքներին: Ես չեմ կարող համաձայնել Դատարանի վճռի 58-րդ կետի 3-րդ ենթակետում արտահայտված պնդմանը: Այն փաստը, որ գործի գերազանցապես տեխնիկական բնույթը (ինչը կասկածի տեղիք է տալիս) կարող է դրդել կողմերին զերծ մնալ 6-րդ հոդվածով նախատեսված լսումներից, դեռևս բավարար հիմք չի կարող ծառայել նման լսումներից հրաժարվելու համար, հատկապես, որ դիմողն այս կապակցությամբ իր համաձայնությունը չի տվել:

Ավելին, գործի հանրային հետաքրքրությունը ներկայացնելու հանգամանքը անհրաժեշտ նախադրյալ չէ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի գործողության համար: Անառարկելի է գործի կարևորությունը դիմողի համար,

իսկ վերջինս հենց այն կողմն է, որի պաշտպանությունն ամրագրվում է Կոնվենցիայի այդ դրույթով: Փաստորեն, անհատ քաղաքացին ի զորու չէ ճեղքել բյուրոկրատական պատնեշը: Այն փաստը, որ դիմողի անձնական իրավունքը ծագել էր հանրային իրավունքից, մեկ անգամ ևս հաստատում էր 6-րդ հոդվածի 1-ին կետի կիրառելիությունը: Բյուրոկրատական համակարգի կողմից հոդվածի կիրառելիությունը «արդյունավետության նկատառումներով» աննպատակահարմար համարելը դեռևս բավարար հիմնավորում չէ վերոհիշյալ հոդվածի պահանջներն արհամարհելու համար:

3. Ես համամիտ եմ Դատարանի կարծիքին 6-րդ հոդվածի հետ կապված՝ 14-րդ հոդվածի կապակցությամբ: